կամ զծունկսդ։ Տե՛ս, ո՛վ տիկին իմ, զայս իշխանութիւն մեք մեղէն քաջութեամբ ո՞չ առնեմք միթէ, և զփառս քո՝ քանզի մեծ իմն գտար քան զկինս երիցանց։ Ասա՛ ինձ որք ոչ պատվեն զքեզ յընթրիսս, ի բաղանիս եւ կամ ի հարսանիս. երեւելիս կացուցանեմ զքեզ ի վերայ նոցա. զարանցն զփիլոնսն առնեմք, որ գան առ քեզ ի խնդիր, գիտասցեն զքեզ եւ փառաւորեսցիս։ Տե՛ս զի եւ զսևագլուխս եւ զվարդապետս փախուցեալ եմք, զիա՞րդ և զկին երիցանց ոչ խայտառակեցեմք։ Զայսպիսիս և որ սոցին նման մեծաբանութիւնս առնէին ի տունս իւրեանց ընդ յարակիցս և ընդ դրացիս(*), և ԺԻ տարի յայս ընթանային գերի անկեալ օրէնք ի ձեռս իւրեանց։ Կոյս ընդ այրոյ պսակէին(**). և այլք բերեալ կանոնս յատենի դնէին և ասէին. Ահա՛ այս մեզաց զայս ապաշխարանս գրեալ են. առնեմ զայս եւ յետոյ ապաշխարեմ։ Այս եղև ի Սուրբ Գէորք, որ եդ կանոն՝ ոմն այրի էր եւ կոյս էառ։ Հասի եւ չհասի եւ մեղօք լինելոյ՝ անթիւ(***)։ Նաեւ երիցունք եւս նմանեցին նոցա վասն աչառութեան և իբրև զսեղեխ եւ զսիրառն եղեն ընդ նոսա անամօթացեալք։ Նաև արժան եւ անարժան ի կարգ քահանայութեան մուծին։ Եւ գրէր աթոռակալն. Յիսուսի Քրիստոսի ծառայ այսինչէս, ծանի՛ր այս անուն երէց, Փիլան հէրիֆի աթոռին պոի, հաղորդ տաս դորա, որ էին պոռնիկք եւ բանադրածք ի վարդապետաց։ Եւ այսպիսի բնաւին ոչ գիտէին զօրէնս եւ զկանոնս սրբոց հայրապետաց, այլ և ի կաշառակուրութիւն մոլեալք իբր զհեթանոսս։ Եւ ի թեմ աթոռոցս զնմանիս իւրեանց առաքէին և այլ վատթարագոյնս քան զիւրեանս՝ չունս

(*) Սուրբ Սարգսցիք։ (**) ի Սուրբ Գէորքայ։
(***) Սուրբ Նիկողոսցիք։